Հավելված N2

*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի N218-Ն որոշման*

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ NԿՊ0062

# ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք.Երևան (կնքման վայրը) ՛՛08՛՛ 01 2018 թվական

Մատակարարը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Ի դեմս Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

Սպառողը՝ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
((կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Կարապետյան
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. **Մատակարարը պարտավոր է՝**

1) Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի.

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը,

2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը,

3) Սպառողի (Ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.

4) Սպառողի (Ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.

5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը,

6) 0.4 կՎ և բարձր լարման սպառողների համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:

## 12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Մատակարար՝ | Սպառող՝ |
| --- | --- |
| «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ | ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն |
| Գտնվելու վայրը՝ | Գտնվելու վայրը՝ |
| ք. Երևան Արմենակյան 127 | ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 |
| Հեռախոս +374 10 65 00 86 | Ծանուցման հասցեն՝ |
| Էլ. փոստ office@ena.am | ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 |
| ՀՎՀՀ 01520882 | Էլ. փոստ secretariat@mineconomy.am |
| Հ/հ 2474663150140560 | Հեռախոս +374 11 59 72 00 |
| Բանկ «Արդշինբանկ» ՓԲԸ | ՀՎՀՀ 02505983 |
| Գործունեության լիցենզիա N0092 | Բանկ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն |
| Կ.Հարությունյան (ստորագրություն, անուն, ազգանուն) | Հ/հ 900011010320, 900013010013 |
| Կ. Տ. (առկայության դեպքում) | Ա. Կարապետյան (ստորագրություն, անուն, ազգանուն) |
| | Կ. Տ. (առկայության դեպքում) |

«08» հունվարի 2018թ. կնքված N ԿՊ0062
էլեկտրական էներգիայի մատակարարման
պայմանագրի հավելված 6-ին կից

ՑԱՆԿ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

| հ/հ | ID | Քարտի համարը | Բաժանորդի անվանումը | Մասնաճյուղի (էլ. ցանցի) անվանումը |
|---|---|---|---|---|
| 1 | 1677009 | 2700666 | ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | ԽՍՏՏ «Գործարանային» տարածք |
| 2 | 1723009 | 5230424 | ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | ԽՍՏՏ «Գործարանային» տարածք |
| 3 | 74640004 | 2008739 | ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Կենտրոն ՏՀՏ «Արաբկիր» տարածք |

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝

Կ. Հարությունյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.
(առկայության դեպքում)

Սպառող՝
ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Կարապետյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.
(առկայության դեպքում)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 07/20.2/6327-19

«12» 07 2019 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի
ԻՐԱՑՄԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Դ. ՂԱԶԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղազինյան

ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ վարչապետի 01.06.2019թ. 658-Լ որոշման համաձայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը վերանվանվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը անվավեր ճանաչել հունիս ամսվա նախկին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության /ՀՎՀՀ՝ 02505983/ և ՀՀ Գյուղատնտեսության նախարարության /ՀՎՀՀ՝ 02508046/ ամվամբ դուրս գրված էլեկտրաէներգիա ծախսի հարկային հաշիվները և դուրս գրել նոր հարկային հաշիվներ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության նոր վավերապայմաններով /ՀՎՀՀ՝ 02698604/:

Ստորև ներկայացնում ենք ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների /ներկայումս ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն/ և ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունների /ներկայումս ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն/ էլեկտրաէներգիա մատակարարման պայմանագրերի տվյալները՝

612

Կատարող՝ Գործերի կառավարման վարչություն Կարինե Տեր-Հակոբյան
011 597224

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
Գործավարության բաժին
N 05-2197 30.07 2019թ.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
ԻՐԱՑՄԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

| NN | Կազմակերպության անվանումը | Պայմանագրի համարը | Կնքման ամսաթիվը | Հասցե | Բաժանորդի քարտի համարը | Բանկային տվյալները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | ԿՊ0062 | 08.01.2018թ. | Մ.Մկրտչյան 5 | - | 900011018695 |
| 2 | Գյուղատնտեսության նախարարություն | 700906/2019 | 22.09.2008թ. | Հանրապետության հրապարակ 3 | 3700906 | 900011018737 |
| 3 | Գյուղատնտեսության նախարարություն | 010132/2019 | 23.09.2008թ. | Մամիկոնյանց փող. 39/Ա | 0331399 | 900011018737 |

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ